ծաթեայ նարգիլէն: Այդ բոլորը, եթէ կարելի է այդպէս ասել, բաւական փաշայական էր, բաւական նման էր փաշայի տան հիւրասիրութեան ձեւերին:

— Հիմա ես բոլորովին համոզուեցայ, պարոն բժշկապետ, — ասաց սրբազանը, — որ դուք բաւական ընտելացած էք մեր սովորութիւններին:

— Ես մինչեւ անգամ սիրում եմ արեւելեան սովորութիւնները, — պատասխանեց Ասլանը, նկատելով, որ սրբազանի հարցմունքները քննական ձեւ են ստանում: — Երբ ես վերադառնում եմ իմ հայրենիքը, իմ ամենալաւ ընծաները իմ ընտանիքին լինում են արեւելեան գորգեր, շալեր, արեւելեան կարասիք: Մի սենեակ իմ տան մէջ, ուր ես պարապում եմ, զարդարուած է բոլորովին արեւելեան ճաշակով: Արեւելքը հրապուրիչ է, սրբազան հայր, նա անփառասէր կրօնաւորների վրայ անգամ ունենում է իր ազդեցութիւնը:

— Ինչպէս ինձ վրայ, պարոն բժշկապետ, — պատասխանեց սրբազանը, հասկանալով իր խօսակցի խուլ ակնարկութիւնը: — Ես, պարոն բժշկապետ, հետեւում եմ մեր նշանաւոր պատրիարքներից մէկի օրինակին, որը հագնում էր ամենաթանկագին զգեստներ, օծւում էր անուշահոտ իւղերով, մօրուքի եւ գլխի մազերի վրայ սփռում էր ոսկու փոշի եւ իրան շրջապատում էր ամէն տեսակ շքեղութիւններով: Մի անգամ, սուլթանի հետ սեղան նստած ժամանակ, թագաւորը նկատողութիւն արեց նրան, թէ կրօնաւորին վայել չէ այդ աստիճան պճնասիրութիւնը: Նա, փոխանակ պատասխանելու, բաց արեց իր օձիքը եւ ցոյց տուեց. փառաւոր մետաքսեայ զգեստի ներքոյ, մերկ մարմնի վրայ, նա հագած ունէր այծի մազից գործուած, կոշտ, ծակռտող խարազն, որ մի ժամանակ հագցնում էին յանցաւորներին, երբ կամենում էին աւելի տանջել նրանց, յետոյ սովորութեան եղաւ հագնել ճգնաւորներին, որոնք իրանց անձը ենթարկում էին ամէն տիպի փորձութիւնների:

Ասլանը շատ լաւ գիտէր, որ նորին սրբազնութիւնը իր սեւ ատլասի փարաջայի տակից այս տեսակ խարազն հագած չունի, բայց դարձեալ համաձայնուեցաւ նրա հետ, ասելով.

— Արեւելքում արտաքին փայլը մեծ նշանակութիւն ունի:

— Մինչեւ անգամ հարկաւոր է, — աւելացրեց սրբազանը, — այստեղ մարդկանց խելքը աչքերումն է եւ ոչ՝ գլխումը: Իմ նախորդը, երբ որ գնում էր փաշայի մօտ, նրան ժամերով սպասել էին տալիս, մինչեւ թոյլտուություն էր ստանում ներկայանալու, որովհետեւ ոտքով էր գնում եւ աբեղայական հասարակ հագուստով: Բայց ինձ հետ այնպէս չեն վարւում...

— Ձեր փաշան բաւական քաղաքավարի մարդ է, — խօսքը փոխեց Ասլանը: